ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՆԱ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԶՈՒԳԱԴՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության թեմայի արդիականությունը պայմանավորված է ուսումնական ծրագրով նախատեսված առարկաներից ձեռքբերված գիտելիքների փոխկապակցվածությամբ, աշակերտների աշխարհայացքի ձևավորման վրա այդ հանգամանքի ազդեցությամբ, ինչպես նաև՝ մայրենիի դասերի ընթացքում առարկայական զուգադրումների կիրառման մեթոդական քայլաշարի անկատարությամբ:

Ուսումնասիրության նպատակն է.

- մշակել մայրենիի դասագործընթացում առարկայական զուգադրումների իրականացման մեթոդական քայլաշար:

Ուսումնասիրության խնդիրներն են.

1. ուսումնասիրել մեր թեմայի հիմնախնդրին առնչվող առկա մասնագիտական գրականություն և բացահայտել հիմնական մոտեցումները,
2. դիտարկել մայրենիի չափորոշչային պահանջները, առարկայական ծրագիրը, դասագրքերը, և դրանք քննել մեր մագիստրոսական ատենախոսության թեմայի տեսանկյունից,
3. իրականացնել մայրենիի դասալսումներ և դրանք քննարկել մեր ուսումնասիրության հիմնախնդրի տեսանկյունից,
4. բացահայտել տարրական դպրոցի ուսուցիչների իրազեկվածությունը մայրենիի դասագործընթացում առարկայական զուգադրումների իրականացման համատեքստում,
5. մշակել և փորձարկել առարկայական զուգադրումների իրականացմամբ վարժությունների համակարգ և հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Ուսումնասիրության նորույթը.

- մշակել, փորձարկել և ներկայացրել ենք առարկայական զուգադրումների կազմակերպման մեթոդական քայլաշար մայրենիի դասերի ընթացքում:

Ուսումնասիրության մեթոդներն են.

- մայրենիի դասերի ունկնդրում, փորձարարական դասերի վարում,
- հարցախույզ ուսուցիչների շրջանում,

- զրույց, հարցազրույց աշակերտների հետ,
- մայրենիի դասալսումների, ուսումնասիրությունների արդյունքների համեմատություն և վերլուծություն,
- հավաքագրված տվյալների վիճակագրական վերլուծություն:

Ուսումնասիրության տեսական նշանակությունը.

- ուսումնասիրվել և մշակվել են հիմնախնդրին վերաբերող տեսական մոտեցումները, առաջարկվել են նաև մոտեցումներ մայրենիի դասագործընթացում առարկայական զուգադրումների կիրառման անհրաժեշտության մասին:

Ուսումնասիրության գործնական նշանակությունը.

- մեր ուսումնասիրության հիմնախնդրին վերաբերող մշակված քայլաշարը կարող է կիրառվել տարրական դպրոցում, ինչպես նաև այն օգտակար կլինի Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների համար՝ մանկավարժական պրակտիկայի ընթացքում:

Ուսումնասիրության օբյեկտը.

- տարրական դպրոցում մայրենիի դասն է՝ իր բազմաբաղադրիչ կառուցվածքով:

Ուսումնասիրության առարկան.

- մայրենիի դասի ընթացքում իրականացվող առարկայական զուգադրումներն են:

ԳԼՈՒԽ 1

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԶՈՒԳԱԴՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

1.1. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԶՈՒԳԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ուսումնական գործընթացում առարկայական զուգորդումներ ստեղծելու հիմնահարցը նույնքան հին է, որքան բուն առարկայական ուսուցումը: Առարկայական զուգորդումների հիմնահարցին անդրադարձել են գերազանցապես դիդակտիկական առումով (Յ. Կոմենսկի, Հ. Պեստալոցի, Ֆ. Հերբարտ, Կ. Ուշինսկի, Խ. Աբովյան և ուրիշներ), իրականուցումը համարելով ուսուցման օպտիմալացման կարևոր միջոց: Առարկայական զուգորդումների իմացաբանական և հոգեբանամանկավարժական հիմունքներին են անդրադարձել Մ. Դանիլովը, Ի. Զվերևը, Յու. Բաբանսկին և ուրիշներ[1]: 1970-ական թվականներից սկսած տարբեր տեսակի առարկայական զուգորդումների իրականուցմանն սկսեցին որոշակի տեղ տալ դպրոցական առարկայական ծրագրերում և դասագրքերում: Առարկայական զուգորդումները Ժան Պիաժեն դասակարգում է համակարգային մոտեցմամբ՝ նկատի ունենալով տեղայնային, մասնակի համակարգային, ներհամակարգային և միջհամակարգային կապերը: Առարկայական զուգորդումների տեսակները կարելի է ներկայացնել ստորև բերված գծապատկերով՝ նկատի ունենալով ժամանակային, բովանդակային և համակարգային մոտեցումները[2]:

---

[1] Տե՛ս Նանյան Լ., Միջառարկայական կապերի իրականացումը տարրական դասարաններում որպես գեղագիտական դաստիարակության օպտիմալացման միջոց, «Զանգակ-97» հրատարակչություն, Երևան, 2003, էջ 5:

[2] Տե՛ս Նանյան Լ., նշվ. աշխ.


ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԶՈՒԳԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ
Ըստ իրականացման ժամանակի
Ըստ բովանդակության
Հորիզոնա-կան
Ուղղահա-յաց
Հեռանկա-րային
Ըստ գիտ. փաստերի ու տեսություն-ների ընդհանրության
Ըստ կիրառվող հետազոտ-մեթոդների ընդհանրութ-յան
Ըստ մտավոր գործառնութ-յունների բնույթի
Ըստ գիտելիքների և հասկացությունների համակարգվածության
Տեղայնային
Մասնակի համակարգային
Ներհամակար-գային
Միջհամակար-գային

Ժամանակակից հայ դպրոցն իր ուսումնառության գործընթացը կազմակերպում է համաշխարհային դպրոցի փորձի ու նոր ձեռքբերումների հիման վրա: Ավանդական ուսուցման առաջավոր մեթոդների, մեթոդական եղանակների ու հնարների կողքին գործածության ոլորտ են բերվում արդիական մոտեցումները: Առանց ուսուցչի աշխատանքի վերակառուցման և կատարելագործման անհնար է պատկերացնել այդ գործընթացը: Շատ կարևոր է, թե կրթական բարեփոխումների արդի պայմաններում ուսուցիչը որքանո՛վ է պատրաստ ուսուցման մարտավարությունների և նոր մեթոդների ընտրությանն ու կիրառությանը: Զարգացնող ուսուցման մանկավարժությունը պահանջում է ուսումնական տարբեր առարկաների՝ միմյանց մեջ ներթափանցման ուղիների մշակում: Այդ կերպ պայմաններ են ստեղծվում դասավանդման ընթացքում աշակերտների կողմից բազմաբաղադրիչ գիտելիքների ձեռքբերման համար:

Տարրական դասարաններում առարկայական զուգորդումների իրականացումը միշտ էլ մեթոդական հիմնախնդիր է եղել: Այն շատ դեպքերում կրել է մեխանիկական բնույթ, սակայն այլ են նորագույն մանկավարժական մոտեցումների ու ծրագրերի պահանջները: Տարրական դպրոցում մայրենիի դասերի ընթացքում պահանջվում է նյութից բխող ինտեգրում նույն դասարաններում ուսումնասիրվող այլ առարկաների միջև՝ մայրենի-երաժշտություն, նկարչություն, մայրենի-տեխնոլոգիա, մաթեմատիկա և այլն: Այս ծրագրի իրականացումը պահանջում է և՛ գիտելիքներ, և՛ տեղեկատվություն, և՛ ստեղծագործական միտք, և՛ հմտություն, և՛վարպետություն: Տարրական դասարանների մայրենիի դասագրքերը կազմված են հենց առարկայական զուգորդումների իրականացման սկզբունքով, որի պահանջն է իրականացնել հայոց լեզվի գործնական ուսուցում բնագրերի միջոցով[3]:

Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համատեղումը՝ առարկայական զուգադրումները: Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել առարկայական զուգադրումներին,

[3] https://forum.armedu.am/forum/կրթական-ոլորտ/մասնագետի-անկյուն/տարրական-դպրոց/2158-միջառարկայական-կապերը- մայրենի-լեզվի-դասերին) /հասանելի էր 10.10.2018/

որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են: Առարկայական զուգադրումների մասին Յ. Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպե՛ս է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչո՛ւ դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ» [4]:

Առարկայական զուգադրումների կիրառումը մայրենի լեզվի ուսուցչին հնարավորություն է ընձեռում լրացնել աշակերտների գիտելիքների պակասը նաև դասավանդվող այլ առարկաներից՝ ես և շրջակա աշխարհից, տեխնոլոգիայից, երաժշտությունից, կերպարվեստից և այլն: Ուսուցման այս ռազմավարությունը նպաստում է աշակերտների բազմաբնույթ մտածողության զարգացմանը: Նրանց առջև լայն հնարավություն է ստեղծվում առարկաների միջև առկա կապերի ցուցադրմամբ հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների զանազան երևույթներին, պատճառահետևանքային կապերին և օրինաչափություններին: Այդ ճանապարհով նրանք աստիճանաբար վարժվում են ինքնուրույն աշխատանքի, որը կարևոր ուղենիշ է դառնալու՝ նրանց հետագա ամբողջ կյանքի ընթացքում շարունակական կրթության խոչընդոտները հաղթահարելու, ինքնուրույն ուսուցման, կատարելագործման ու բազմակողմանի զարգացման առումով: Քիչ չէ այն ուսուցիչների թիվը, ովքեր գերադասում են աշխատել միայն ավանդական մեթոդներով: Նրանք դժվարությամբ են ընդունում բարեփոխումներով պայմանավորված նորը: Ոչ ոք չի կարող հերքել, որ մեծ են մեր ուսուցչապետերը՝ Մ. Մաշտոցից մինչև Խ. Աբովյան, Ղ. Աղայան, Լ. Շանթ, Հ. Օշական, Ստ. Լիսիցյան, Ա. Տեր-Գրիգորյան և ուրիշներ, և նրանց ավանդած մեթոդները, հիրավի, ընդունելի են: «Ժամանակն է, որ մենք հասկանանք և մեկընդմիշտ հիշենք, որ Թումանյանն ու Իսահակյանը մեր թիկունքն են, մեր մեջքը, մեր հետևապահ զորագունդը»[5]:

---

[4] Տե՛ս Կոմենսկի Յ., Մեծ դիդակտիկա, Երևան, 1962, էջ 195:

[5] http://armeco.am/publ/2-1-0-71#_ftnref2 /հասանելի էր 08.09.2019/

Առանց առարկայական զուգադրումների կիրառման այսօր դժվար է պատկերացնել աշակերտների բազմակողմանի զարգացման ու համակողմանի դաստիարակության իրականացումը, նպաստել կրտսեր դպրոցականի հետաքրքրությունների բարձրացմանն ու ինքնուրույն զարգացմանը:

Մեզ շրջապատող աշխարհում բոլոր առարկաներն ու երևույթները գտնվում են դիալեկտիկական անխզելի կապերի մեջ: Այս առումով աշխարհը, իրերն ու երևույթները միասնական են, և երեխան հենց այս միասնության մեջ էլ ընկալում է աշխարհը, թափանցում նրա էության մեջ՝ միշտ աչքի առջև ունենալով ամբողջությունը, որը և ծնել է առարկայական զուգորդումների իրագործման անհրաժեշտությունը[6]:

Տարրական դասարաններում դրվում են մարդու կրթության ու դաստիարակության հիմքերը: Այս տարիքում երեխաները պետք է տեղեկություններ ստանան բազմաթիվ գիտությունների, արվեստի տարբեր ձևերի մասին, որպեսզի նրանց մեջ բազմակողմանի հետաքրքրություններ արթնանան դեպի շրջակա աշխարհը: Հենց այդ հետաքրքրություններով ու հարցասիրությամբ է պայմանավորված երեխաների հետագա մտավոր զարգացումը, նրանց հակումների ձևավորումը դեպի այս կամ այն գիտությունն ու աշխատանքը, արվեստն ու մասնագիտությունը, հետաքրքրությունների ստեղծումը: Այս առումով էլ առարկայական զուգադրումների տեղին ու ճիշտ կիրառումը հատուկ արժեք է ստանում ոչ միայն դասերը հետաքրքիր, հաճելի և ուսանելի դարձնելու, այլև երեխաների որոշակի հակումների ձևավորման ու մասնագիտական կողմնորոշման տեսակետից:

---

[6] https://forum.armedu.am/forum/կրթական-ոլորտ/մասնագետի-անկյուն/տարրական-դպրոց/2158-միջառարկայական-կապերը- մայրենի-լեզվի-դասերին) /հասանելի էր 15.10.2018/

Ուսումնական աշխատանքում ամեն մի միջոցառում իր որոշակի տեղն ու դերը պետք է ունենա և' ժամանակի, և' գործադրության տեղի ու ձևի առումով, այլապես այն կդառնա ինքնանպատակ, չի դառնա նրա կայուն բաղադրիչը:

Եթե առարկայական զուգորդումները տեղին, չափավոր ու նպատակային չկիրառվեն, ակամա դրանք կարող են դասագործընթացի հիմնական մեխը դառնալ և դասի բուն նպատակը մղել երկրորդ պլան, դարձնել անկարևոր:

Գիտելիքների ձեռքբերումը և կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց հետ և մեկը մյուսի համար հիմք ու ելակետ է, հետևաբար, երեխաներին շրջապատի աշխարհի մասին հնարավորին չափ բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը, ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռող նշանակություն ունի երեխաների աշխարհաճանաչողության համար:



Գծապատկեր 2.

Առաջինը ուսուցման գործընթացում անդրադարձ կապերի օգտագործումն է, որն ամենից առաջ կապվում է ներառարկայական կապերի ճիշտ ու տեղին կիրառման հետ: Այն, ինչ աշակերտներն անցել են նախորդ դասերին կամ ուսման նախորդ տարիներին, հետևողականորեն պետք է կրկնվի, ամրապնդվի, դառնա կարողություն, հիմք ծառայի նորի յուրացման համար և կապվի նորի հետ:

Երկրորդ կարևոր եղանակը ձեռքբերված գիտելիքների ու կարողությունների փոխանցումն է ուսուցման գործընթացում: Բազմաթիվ գիտելիքներ ու կարողություններ, որոնք երեխան ձեռք է բերել առաջ, պետք է հմտորեն օգտագործի ուսուցման գործընթացում:

Երրորդ ձևն այլ գիտությունների տվյալների կիրառությունն է, որը նույնպես լայնորեն կարող է գործադրվել ուսուցման գործընթացում:

1.2. Առարկայական զուգադրումների կիրառումը մայրենիի դասագործընթացում

Տարրական դասարաններում դրվում են բոլոր գիտելիքների ու կարողությունների հիմքերը, երեխաների առջև բացվում են բոլոր փակ դռները. նրանք աստիճանաբար հաղորդակից են դառնում դարերի ընթացքում մարդկության ստեղծած հսկայական մշակութային ժառանգությանը, ծանոթանում են բնության գաղտնիքներին, հարստանում է նրանց խոսքն ու մտածողությունը: Երեխաներին պետք է սովորեցնել շրջապատի աշխարհում տեսնել ու գնահատել գեղեցիկը, լավն ու բարին և գնալ այդ ճանապարհով, նվիրվել աշխարհի ու մեր կյանքի գեղեցկացմանը: Մայրենիի դասերը լայն հնարավորություններ են ստեղծում, քանի որ այդ դասերն իրենց մեջ ամփոփում են արվեստի տարբեր ձևերի, գիտությունների, տեխնիկայի ու տարաբնույթ այլ հարցերի վերաբերյալ եղած տարրական տեղեկությունները: Այս առումով մայրենիի դասերը կարելի է դարձնել հարուստ, բազմակողմանի ու բազմաբնույթ, աշակերտներին գաղափար տալ արվեստի տարբեր ձևերի, տարբեր գիտությունների, մարդկանց ու պատմողական իրադարձությունների մասին:

Տեխնոլոգիա և կերպարվեստ առարկաների ուսումնասիրումը տարրական դասարանների մայրենիի դասերի ընթացքում իրականացվում է «Մայրենի»-ի դասագրքերում զետեղված որոշակի նյութերով. կան տեղեկություններ կերպարվեստի հայ նշանավոր գործիչների՝ Գ. Բաշինջաղյանի, Հ. Այվազովսկու, Մ. Սարյանի մասին: Այս նյութերն ուսումնասիրելիս պետք է տեղեկություններ տալ ոչ միայն արվեստի այդ

խոշոր, աշխարհահռչակ գործիչների, այլև՝ դեպի արվեստի անսպառ ու անսահման աշխարհը տանող կերպարվեստի ինքնատիպ ճանապարհի մասին:

Արվեստով և տեխնոլոգիայով զբաղվելը զարգացնում է ճաշակ, գեղեցիկը նկատելը, գրագետ և գեղեցիկ հարաբերվելը և այլն: Արվեստով զբաղվելու նպատակը, գեղեցիկ և ճիշտ նկարելը չէ, այլ գեղագիտորեն դաստիարակված անհատ լինելն է:

Նկարչությունը տարրական դասարանների բոլոր դասագրքերի կարևոր ու առանձնահատուկ բաղադրիչներից է: Այբբենարաններում նկարները լայնորեն օգտագործվում են, ճնշող մեծամասնություն են կազմում և հիմնականում ուսումնասիրվող նյութի հաղորդման գործառույթ ունեն: Դրանք կարևոր ու անփոխարինելի միջոց են ուսուցողական ու դաստիարակչական նյութի առաջադրման համար, քանի որ բառերով այդ ամենը հաղորդելու հնարավորություն չկա: Դասագրքերում օգտագործվող նկարները լինում են երեք տեսակ՝ առարկայական կամ նկար-բառեր, նկար-նախադասություններ և թեմատիկ նկարներ կամ նկար-պատմություններ:

Նկարների հիմնական խնդիրը կրտսեր դպրոցականի գեղարվեստական ճաշակի մշակումը և գեղագիտական դաստիարակության կարևոր պահանջի իրականացումը պետք է լինի: Յուրաքանչյուր անգամ ուսուցիչն իր համար պետք է պարզի տվյալ նկարի հիմնական նպատակը և ապա նոր անցնի ուսուցման գործընթացում դրա կիրառմանը, որպեսզի այն օրգանապես ձուլվի այդ գործընթացի հետ, դառնա նրա բաղադրամասը և ոչ թե ավելորդ ու անտեղի կցորդ: Հատկապես նոր նյութի մեկնաբանման կամ բացատրման ժամանակ աշակերտների ուշադրությունը պետք է հրավիրել նկարի վրա և ասել, թե նա ի՛նչ դեր ունի նյութի ճիշտ ըմբռնման համար: Նկարների այսպիսի օգտագործումը հնարավորություն կտա մեծապես բարձրացնելու հաղորդվելիք նյութի ճանաչողական ու դաստիարակչական արժեքը և ազդեցությունը, նյութի մեջ տարբերակել էականն ու երկրորդականը:

Բնությունն ու բնագիտական հասկացությունները տարրական բոլոր դասարանների մայրենիի դասագործընթացում ուսումնասիրում են ճանաչողական ու դաստիարակչական տեսակետից և ընկած են դասագրքերում ընդգրկված նյութերի թեմատիկ խմբավորումների հիմքում, որոնք հնարավորություն են տալիս երեխաներին կապել բնության հետ, զգացնել բնության անկրկնելի գեղեցկությունը,

հաղորդակցվել գեղեցիկի հետ: Բնությանը վերաբերող նյութերի ուսումնասիրությունը պետք է անպայման կապվի բնության հետ՝ ամենից առաջ կենդանի բնության դիտման, բնության հետ անմիջական շփման ձևով, իսկ ապա՝ ֆիլմերի ու նկարների ցուցադրման միջոցով:

Բնությունն իր պես-պես գույներով ու ձայներով, իր բազմազան առարկաներով ու երևույթներով բացառիկ կարևոր տեղ է գրավում «Մայրենի»-ի դասագրքերում: Բնությունն իր բոլոր դրսևորումների մեջ էլ գեղեցիկ ու առինքնող է, անհրաժեշտ է միայն տեսնել, զգալ այդ գեղեցկությունը, երեխաներին բացատրել, հասցնել այդ գեղեցկության էությունը և դեպի այն տանող ճիշտ ճանապարհը, որպեսզի նրանք կարողանան առանց միջնորդ օղակի էլ հասկանալ այդ բնությունը, սիրել այն, սովորել նրանից, ապրել նրանով: Ահա այս առումով էլ տարրական դասարանների մայրենիի դասերին գրեթե միշտ պետք է առկա լինի բնությունն ու բնության մասին եղած գիտությունը:

Բնագիտական տվյալներն ավելի շատ անհրաժեշտ կլինեն առաջին դասարանի նյութերի ուսումնասիրման համար, որտեղ կան ընտանի և վայրի կենդանիներ, բազմաթիվ կոնկրետ նյութեր այս կամ այն կենդանու ու բույսի վերաբերյալ, որտեղ պետք է տրվեն անհրաժեշտ տեղեկություններ, որոնք կատարվում են հենց առարկայական զուգորդումներով: Սա նշանակում է, որ ուսուցիչը ոչ մի կերպ ու ոչ մի չափով իրավունք չունի շրջանցելու դրանց վերաբերող հարցերը: Եթե հնարավոր է կենդանի բնության մեջ, կենդանի և անմիջական շփման միջոցով հաղորդելու այս կամ այն գիտելիքը, ձևավորելու այս կամ այն հասկացությունը, գաղափար տալու այս կամ այն առարկայի և երևույթի մասին՝ մյուս բոլոր միջոցներն այս դեպքում երկրորդ պլան են մղվում: Սակայն միշտ չէ, որ հնարավոր է լինում այդ անմիջական կապն ստեղծելու, ուստի անհրաժեշտության դեպքում կարելի է դիմել նաև այլ միջնորդավորված միջոցների օգնությանը, որոնք նույնպես կարևոր նշանակություն ունեն բնության և մարդու միջև անհրաժեշտ կապեր ստեղծելու գործում:

Դեպի գեղեցիկի աշխարհը երեխաների համար ճանապարհ պետք է հարթել բոլոր միջոցներով: Այդ միջոցներից մեկն էլ երգն ու երաժշտությունն են տարրական դասարանների մայրենիի դասերի ընթացքում, որոնք լայնորեն կարող են կիրառվել, այն դարձնել հաճելի, գեղեցիկ, տպավորիչ ու անմոռաց: Դասին երգն ու

երաժշտությունը կարող է օգտագործվել որպես ուսումնասիրվող նյութի համար ընդհանուր տրամադրություն կամ հենք, որի վրա հետո պետք է ձևավորվի տվյալ հյուսվածքը: Կարող է կապվել նյութի հետ որպես նրա ընկալման ու յուրացման օժանդակ միջոց, որը կօգնի ավելի հեշտ ըմբռնմանը:

Պատմական տարրական գիտելիքների հաղորդումը կամ պատմության ու մայրենիի առարկայական զուգադրումների ապահովումը հիմնականում նպատակ ունի ճիշտ ձևավորելու կրտսեր դպրոցականի ժամանակի ըմբռնումը, որն ուսուցման հիմնական նպատակներից է: Դասագրքերում եղած բոլոր այն նյութերը, որոնք պատմական բնույթի են կամ պատմական հենք ունեն, պետք է մատուցել ժամանակաշրջանի մասին ճիշտ պատկերացում տալով, ամենից առաջ գործողությունների պատմական ժամանակաշրջանը ներկայացնելով, որպեսզի այսօրվա հրթիռների, գերձայնային ռազմական ինքնաթիռների ու այլ ահավոր զենքերի դարում ապրող երեխայի համար Հայկ Նահապետի նետ ու աղեղով կռվելը, Վ. Մամիկոնյանի ու նրա զորքերի հերոսական ու անձնազոհ պայքարը պարսկական փղերի դեմ, Խոյ Հակոբի, խոյի մորթու մեջ մտնելով, ծպտված թշնամու բանակատեղին թափանցելը հասկանալի դառնան, միամիտ ու անհեթեթ չհնչեն: Պատմական ընդարձակ ու կոնկրետ տեղեկությունների կամ համապատասխան պատմական ու աշխարհագրական առարկայական զուգորդումների իրագործման ավելի մեծ կարիք կզգացվի հատկապես կոնկրետ պատմական նյութերի ուսումնասիրության ժամանակ, երբ օգտագործվող բոլոր տվյալներն ու փաստերը պետք է խորապես ստուգված ու ճշգրտված լինեն, համապատասխանեն տվյալ գիտությունների ժամանակակից մակարդակին:

Պատմական նյութերը դասագրքում ամենից առաջ ու ամենից շատ գեղարվեստական ստեղծագործություններ են, և դրանց հուզական, զգացմունքային, խոսքարվեստային կողմն ամենևին չպետք է տուժի: Այս նյութերն ամենից առաջ պետք է ուսումնասիրվեն որպես գեղարվեստական ստեղծագործություններ: Ինչպես լեզվի ուսուցման, այնպես էլ հատկապես դաստիարակչական առումով նրանց այս կողմի ազդեցությունն ավելի մեծ կլինի, և այդ պետք է տեղին ու ճիշտ օգտագործել:

Տարրական բոլոր դասարանների մայրենիի դասերի ընթացքում կարևոր է աշխարհի և աշխարհագրության ուսումնասիրումը: Աշխարհ սովորաբար անվանում ենք Երկիր

մոլորակը, որը մարդկության ու նրա ստեղծած քաղաքակրթությունների բնօրանն է: Աշխարհը ճանաչելը յուրաքանչյուր մարդու պարտականությունն ու երազանքն է, և այդ գործընթացն սկսվում է նրա ծննդյան օրվանից և շարունակվում է նրա ամբողջ կյանքի ընթացքում: Աշխարհի ճանաչումն ամենից առաջ սեփական շրջապատի, մեր ապրած միջավայրի ճանաչումն է, նրա զգալն ու վերապրելը, որն սկսվում է սեփական օջախից, բնակավայրից, շրջանից ու հանրապետությունից, մինչև պետությունը, ամբողջ երկրագունդն ու տիեզերքը: Աշխարհն ու աշխարհի մասին եղած գիտելիքները երեխաների համար ոչ միայն շատ մատչելի են, այլև գրավիչ ու հետաքրքրող, ուստի դրանք պետք է տալ փոքրիկ, չափավորված միավորներով: Անհրաժեշտ է օգտագործել ցուցադրվող նյութեր՝ քարտեզներ, նկարներ և այլն:

Տեխնիկան ու տեխնիկական գիտելիքները լայնորեն կիրառվում են տարրական բոլոր դասարանների մայրենիի դասերի ընթացքում: Այսօրվա մեր կյանքը մեծապես կապված է գիտության ու տեխնիկայի տարբեր ճյուղերի հետ: Էլեկտրականությունը, հեռուստատեսությունը, ռադիոն, համակարգիչը, ժամանակակից կենցաղային սարքավորումները, տրանսպորտային միջոցները և ավտոմատիկան այնքան խորն են թափանցել կյանքի մեջ, որ այսօրվա կյանքն իմաստ չի ունենա առանց դրանց: Տարրական դասարանների մայրենիի դասերին տեխնիկայի ու տեխնիկական գիտելիքների այսպիսի գործնական կիրառումը, որպես առարկայական զուգադրումների գործադրման ձևերից մեկի, ոչ միայն դասը կհարստացնի նոր տարրերով, հնարավորություն կտա տեխնիկայի արդի նվաճումները ճիշտ, տեղին ու ժամանակին կիրառելու դասագործընթացում, այլև կնպաստի կրտսեր դպրոցականի տեխնիկական մտածողության զարգացմանը, կկրթի ու կդաստիարակի ժամանակակից մարդ: Մայրենիի դասերին գիտատեխնիկական տեղեկության կարիքն ամեն օր ու ամեն վայրկյան կարող է ծագել. դա ժամանակի պահանջն է ոչ միայն դասի բովանդակությունն ապահովելու, այլև առարկայական զուգադրումների պահպանման առումով: Շատ կարևոր է այստեղ նաև ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունը: Ապահովելով առարկայական զուգադրումները՝ ուսուցիչը մայրենիի դասը պետք է դարձնի բազմաբնույթ, հարուստ, հագեցած ու հետաքրքիր:

Թատերական արվեստի տարրերի օգտագործումը տարրական դասարանների մայրենիի դասերի ընթացքում դրական արդյունք է տալիս: Դերերով կարդալը

թատերական արվեստի տարրերից ամենապարզն ու մատչելին է: Դերերով կարդալու ժամանակ աշակերտը մտնում է իր դերի մեջ, ավելի լավ է պատկերացնում իր կարդացածը և ձգտում է ձայնով, կարդալու եղանակով ճիշտ վերարտադրել տվյալ գործող անձի հոգեվիճակը, թափանցել կերպարի էության մեջ: Այս աշխատանքը բարելավում է կարդալու տեխնիկան և որոշակի հաճույք է պատճառում երեխաներին: Անգիր արված նյութը դերերով արտասանելիս աշակերտները մտովի մտնում են իրենց դերի մեջ, իրենց խոսքը, շարժումները, հարց ու պատասխանը համապատասխանեցնում են մյուսների խոսքին ու շարժումներին: Գործադրելի է բեմականացումը՝ հատկապես թեմատիկ խմբի նյութերի ամփոփման դասերին: Այն միանգամայն դրականորեն կազդի նյութի յուրացման, երեխաների ճանաչողության սահմանների ընդարձակման, նրանց համակողմանի դաստիարակության վրա:

Ճարտարապետական ու քանդակագործական արվեստի տարրերի օգտագործումը հաճախ են տարրական դասարանների մայրենիի դասերի ընթացքում: Դասագրքերում բազմաթիվ նյութեր կան քանդակագործության ու ճարտարապետության մասին, որոնք ցույց են տալիս դարեր շարունակ մեր քարաշերտ երկրում քարի հետ անընդհատ շփված մեր հին ժողովրդի քարակերտ հրաշալիքները, բացատրում են դրանց հավերժական գեղեցկության գաղտնիքները: Կրտսեր դպրոցականը գրքում հանդիպում է տարբեր գրողների, գիտնականների ու պետական նշանավոր գործիչների, պատմական անձնավորությունների ու իրադարձություններին նվիրված արձանների ու արձանախմբերի: Դասագրքում նյութեր կան նաև մեր հին ու նոր քաղաքների (Անի, Դվին, Երևան, Էրեբունի, Էջմիածին), նշանավոր ճարտարապետական կառույցների (Գառնի, Զվարթնոց և այլն) մասին, որոնք հնարավորություն են տալիս խոսելու նաև արվեստի այդ բնագավառի մասին, Երեխաներն ինքնուրույն այս ամենը դիտել, ճանաչել, ընկալել չեն կարող, ուսուցիչը պետք է այս գործում ևս հմուտ առաջնորդ լինի նրանց համար: Խոսքարվեստի կիրառումը տարրական դասարանների մայրենիի դասագործընթացում ինքնաբերաբար է, քանի որ կրտսեր դպրոցականն առաջին դասարանից գործ ունի գեղարվեստական տարբեր ստեղծագործությունների՝ պատմվածքների, հեքիաթների, բանաստեղծությունների, առակների, հանելուկների, առածների, ասացվածքների, շուտասելուկների հետ, որոնք խոսքարվեստի

դրսևորման ձևերից են: Խոսքարվեստի կրթադաստիարակչական այդ մեծ ու անսպառ հնարավորության օգտագործման անհրաժեշտ ու մատչելի ձևը գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցումն է: Դասերին լայնորեն կիրառվում է նաև անգիր արտասանությունը կամ գեղարվեստական արտասանությունը, պատմումը: Հիմնական նպատակներից մեկն էլ կրտսեր դպրոցականի բանավոր խոսքի զարգացումն է՝ պատմելու, խոսք կառուցելու կարողության ձևավորումը[7]:

Դպրոցներում գործում են նաև ասմունքի խմբակներ, որտեղ ընդգրկված են տաղանդավոր ասմունքող աշակերտներ: Այսպիսով՝ խոսքարվեստի տարրերը հաջողությամբ են գործադրվում մայրենիի դասերին, և դրանք դարձնում են խորապես ուսանելի, կրթական ու դաստիարակչական տեսակետից նպատակաուղղված և արդյունավետ:

Մաթեմատիկայի կիրառումը տարրական դասարանների մայրենիի դասերի ընթացքում առանցքային նշանակություն ունի: Մաթեմատիկան ամենուրեք է և ամեն ինչում, մաթեմատիկայի լեզուն տիեզերական է ու ընկալելի՝ բարձր գիտակցությամբ օժտված մարդկանց համար, այն անքակտելի կապեր ունի ցանկացած բնագավառի, ցանկացած ուսումնական առարկայի՝ մայրենի ու երաժշտություն, հասարակագիտություն ու պատմություն, ֆիզկուլտուրա ու տեխնոլոգիա, բնագիտական առարկաներ ու տարբեր լեզուների հետ: Ուսուցիչը պետք է կարողանա տեսնել ու գտնել եզրեր՝ սովորողներին տեսանելի դարձնելու այդ կապերը յուրաքանչյուր դասի համար:

Հանրակրթության բնագավառում մաթեմատիկան առանցքային նշանակություն ունեցող առարկա է, այն ընդգրկված է բոլոր դասարանների առարկայացանկում: Դա պայմանավորված է հատկապես այն գործոնով, որ սովորողների տրամաբանական մտածողության զարգացման գործում մաթեմատիկան ընձեռում է բացառիկ հնարավորություններ: Ուսուցման գործընթացում սովորողների մտավոր կարողությունների զարգացման հարցերը միշտ էլ կարևորվել են, սակայն պետք է շարունակություն ունենա կրթական բոլոր աստիճաններում ՝ սկսած տարրական դպրոցից ՝ մինչև ավագ դպրոցի ավարտը: Ավանդական մոտեցմամբ ընդունվում էր, որ մաթեմատիկայի ուսուցումն ինքնաբերաբար կնպաստի սովորողների

[7] http://armeco.am/publ/2-1-0-71#_ftnref2 /հասանելի էր 25.11.2018./

մտածողության հմտությունների զարգացմանը: Դրանից ելնելով էլ՝ առարկայական ծրագրերում տրամաբանությանը վերաբերող թեմաներ ըստ էության չէին ընդգրկվում: Մինչդեռ ներկայումս մոտեցումն այլ է. պարզվում է, որ տրամաբանական մտածողության զարգացումը պահանջում է նպատակային և հետևողական աշխատանք, այն ենթադրում է նաև որոշակի գիտելիքների համակարգ: Քերականական տարրական գիտելիքների ուսումնասիրումը տարրական դասարանների մայրենիի դասերի ընթացքում լեզվական քերականական գիտելիքների ուսումնասիրումն է, որն իրականացվում է գործնական եղանակով: Գիտական սահմանումներ տրվում են այն չափով, որքանով գործնական վարժությունների հիման վրա աշակերտները հասնում են ընդհանրացումների ու եզրակացությունների: Լեզվի գործնական ուսումնասիրումը կատարվում է ընթերցանության համար նախատեսված՝ բարբառայնությունից զուրկ, գրական բարձր հայերենով բնագրերի հենքով, որոնք իրենց մեջ պարունակում են անհրաժեշտ քերականական նյութի օրինակներ: Աշակերտները չեն տիրապետում քերականորեն ճիշտ խոսք կառուցելու պահանջներին: Նրանց խոսքի մեջ իշխող է դարձել ժարգոնային, բարբառային, օտարաբան բառերի կիրառումը: Այս առումով էլ, սկսած տարրական դասարաններից, իրականացվում է լեզվի գործնական ուսումնասիրումը: Լեզվական տարբեր իրողությունների ուսումնասիրման նյութ է ծառայում գրական բնագիրը: Դրա մեջ դրսևորվում և փոխադարձ կապերի մեջ երևում են լեզվական տարրերն ու մակարդակները, քերականական առանձնահատկություններն ու օրինաչափությունները:

Ինտեգրված դասի ընթացքում աշակերտների որոնողական և համագործակցային աշխատանքային ձևերն ավելի ակտիվ բնույթ են կրում: Ինտեգրված առարկաների և դրանց փաստացի նյութի շուրջ կատարվող աշխատանքները բխում են բնագրի բովանդակությունից, թեմայից, լեզվից: Կրտսեր դպրոցականը լիովին ի վիճակի չէ գտնել հարցաշարերում առաջադրված բոլոր հարցերի պատասխանները: Այս դեպքում համագործակցված աշխատանքը կրելու է աշակերտ-ծնող, աշակերտ-տեղեկատվական գիրք, աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ զույգերով կամ խմբային կիրառության ձևը

[8] Տե՛ս http://armeco.am/publ/2-1-0-71#_ftnref2 /հասանելի էր 25.11.2018./

դասարաններում «Մայերենի»-ի դասընթացն ունի ինչպես բուն լեզվական, այնպես էլ՝ ճանաչողական արժեք ունեցող գիտելիքների հաղորդման հիմնական միջոց:

Տարրական դասարաններում հայոց լեզուն և գրականությունն ուսուցանվում են միասին. դա հնարավորություն է տալիս քերականական գիտելիքների գործածությունը տեսնելու դրանց կից ներկայացվող տարբեր գեղարվեստական բնագրերում[11]:

««Մայրենի» առարկայի ուսումնական ընդհանուր նպատակները» բաժնում մեր թեմայի հետ անմիջական կապ ունի բառարաններից, հանրագիտարաններից, տպագիր և էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու հմտությունների ձևավորումը:

«Մայրենի» առարկայի չափորոշչի միջուկում հատուկ տեղ է հատկացված կապակցված խոսքի զարգացմանը՝ խոսքային գործունեության տեսակներին (ունկնդրում, ընթերցանություն, մտքերի գրավոր ու բանավոր արտահայտում, մենախոսություն, երկխոսություն, դերային խաղ, բեմականացում, քննարկում, բանավեճ) և հաղորդակցական գործունեության տեսակները (հաղորդում, հարցում, կամքի արտահայտում, ժխտում) և դրանց հետևանքով ձևավորվող խոսքի տեսակները (պատմողական, դատողական, դիմում, հրաման, իղձ, հորդոր), ինչպես նաև տարբեր բնույթի գրավոր աղբյուրներում (բառարան, հանրագիտարան, մամուլ, համացանց) կողմնորոշվելու, անհրաժեշտ տեղեկատվական նյութեր ձեռք բերելու և նպատակադրված կիրառելու կարողություն[12]:

Աշակերտն ուսումնական գործընթացի մասնակիցն է, որը պետք է գիտելիքին հասնելու ճանապարհին դրսևորի ինքնուրույնություն, նախաձեռնություն, ստեղծագործելու կամք և ցանկություն, ճանաչողական գործունեության ընթացքում կուտակած գիտելիքները կիրառի գործնականում, սովորածը և հավաքած տեղեկությունները կարողանա հաղորդել ընկերներին և դրսևորի հաղորդակցական, համագործակցային և հանդուրժողականության որակներ: Այս բաժինը ուսուցչին կօգնի «Մայրենի»-ի դասընթացը նոր մեթոդներով և եղանակներով կազմակերպելիս: Նշվում են ուսումնական գործընթացի եղանակները՝ դասարանական և

[11] Տե՛ս նշվ. աշխ., էջ 3-7:
[12] Տե՛ս նշվ. աշխ., էջ 8-12:

արտադասարանական աշխատանքներ, հանգամանորեն թվարկվում է ուսումնական գործընթացի անհատական, խմբային, զույգերով և խաղային գործունեության տեսակները, այնուհետև տրվում է սրանցից յուրաքանչյուրի համառոտ նկարագրությունը։

Ուսումնական խնդիրների լուծման նպատակով ինտեգրման միջոցով պահանջվում է ուսուցումը ներկայացնել երեք մակարդակներով։ Առաջին մակարդակը նշում է այն նվազագույնը, թե ինչ պիտի իմանա և կարողանա կատարել սովորողը։ Երկրորդը նշում է գիտելիքների և կարողությունների միջին մակարդակը, իսկ երրորդը՝ բարձր մակարդակ ունեցող սովորողներին ներկայացվող պահանջներն են[13]։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրել ենք մեր թեմայի հիմնախնդրին վերաբերող գիտամեթոդական գրականություն, որի արդյունքում պարզել ենք, որ ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել առարկայական զուգորդումներին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ նախապայմաններից են: Տարրական դասարանների մայրենիի դասերին առարկայական զուգորդումների իրականացումը պահանջում է և՛ գիտելիքներ, և՛ տեղեկատվություն, և՛ ստեղծագործական միտք, և՛ հմտություն, և՛վարպետություն: Տարրական դասարանների մայրենիի դասագրքերը կազմված են հենց առարկայական զուգորդումների իրականացման սկզբունքով, որի պահանջն է իրականացնել մայրենիի գործնական ուսուցում բնագրի շուրջ աշխատանքի միջոցով: Առարկայական զուգորդումների դերը մայրենիի դասագործընթացում հիմնավորվում է նրանով, որ այս զուգորդումների կիրառումը տարրական դասարանների ուսուցչին հնարավորություն է ընձեռում լրացնել աշակերտների գիտելիքների պակասը նաև դասավանդվող այլ առարկաներից, ինչպես՝ ես և շրջակա աշխարհից, տեխնոլոգիայից, երաժշտությունից, կերպարվեստից և այլն: Ուսուցման այս ռազմավարությունը նպաստում և հնարավորություն է ստեղծում առարկաների միջև առկա կապերի ցուցադրմամբ հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների զանազան երևույթներին, պատճառահետևանքային կապերին և օրինաչափություններին: Գիտելիքների ձեռքբերումը և կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց, որը ելակետ է կրտսեր դպրոցականներին շրջապատի աշխարհի մասին հնարավորին չափ բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը, ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռող նշանակություն ունի կրտսեր դպրոցականների աշխարհաճանաչողության համար:

Բացահայտել ենք տարրական դպրոցի ուսուցիչների իրազեկվածությունը մայրենիի դասագործընթացում առարկայական զուգադրումների իրականացման համատեքստում և պարզել, որ ուսուցման ավանդական մեթոդների հիման վրա զարգացնելու և կիրառելու դասավանդման ժամանակակից մեթոդները ու հնարները

հնարավորություն են ընձեռում լիարժեք իրականացնել առարկայական զուգադրումներ:

Մշակել և փորձարկել ենք առարկայական զուգադրումների իրականացմամբ վարժությունների համակարգ, որի կիրառումը տարրական դպրոցում բավականին արդյունավետ եղավ: Նրանց առջև լայն հնարավություն է ստեղծվում առարկաների միջև առկա կապերի ցուցադրմամբ հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների զանազան երևույթներին, պատճառահետևանքային կապերին և օրինաչափություններին: Այս ճանապարհով շարունակական կրթության խոչընդոտները հաղթահարելու, ինքնուրույն ուսուցման, կատարելագործման ու բազմակողմանի զարգացման առումով աստիճանաբար վարժվում են ինքնուրույն աշխատանքի:

Առարկայական զուգադրումների կիրառման արդյունավետությունը մայրենիի դասագործընթացում պարզելու նպատակով հարցախույզ ենք անցկացրել տարրական դասարանների ուսուցիչների շրջանում և եկել ենք այն եզրակացության, որ ներկայացված պահանջները չէին համընկնում և գործնականում ուսուցիչներն այլ պատկերացումներ ունեին, հետևաբար մենք հանգեցինք նրան, որ առարկայական զուգորդումները տարրական դասարաններում իրականացվում են ոչ լիարժեք, մասնավորապես՝ մայրենին որոշ առարկաների զուգադրումներին հետ հարցին ոչ լիարժեք էին պատասխաններ էին տրվել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, 2015, 314 էջ:
2. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի-4, հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, Երևան 2009, 191 էջ:
3. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Չիբուխչյան Կ., Մայրենի-2, հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի դասագիրք, «Մանմար» հրատարակչություն, Երևան, 2019, 157 էջ:
4. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Չիբուխչյան Կ., Մայրենի-3, հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք, «Մանմար» հրատարակչություն, Երևան, 2019, 165 էջ:
5. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Չիբուխչյան Կ., Մայրենի-4, հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք, «Մանմար» հրատարակչություն, Երևան, 2016, 175 էջ:
6. Կոմենսկի Յան Ամոս, Մեծ դիդակտիկա, Երևան, 1962, 195 էջ:
7. Հայոց լեզու, գրականություն հանրակրթական հիմանական դպրոցի առարկայական ծրագրեր (1-9 դասարաններ) ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ.-ի 29 օգոստոսի N 1000-Ա/Ք հրամանի, 81 էջ:
8. Հայոց լեզու, գրականություն հանրակրթական հիմանական դպրոցի առարկայական չափորոշիչ (1-9 դասարաններ) ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ.-ի 29 օգոստոսի N 1000-Ա/Ք հրամանի, 40 էջ:
9. Հովհաննիսյան Վ., Աբրահամյան Ա., Իսկանդարյան Ս., Ղարագեբակյան Գ., Մաթեմատիկայի ուսուցումը երկրորդ դասարանում (ուսուցչի ձեռնարկ), Երևան, «Արևիկ» հրատարակչություն, 2001, 112 էջ:
10. Հովսեփյան Ս., Հարությունյան Ա., Աղաջանյան Մ., Վերդյան Լ. Տեխնոլոգիա-2, 2-րդ դասարանի դասագիրք, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, 2018, 68 էջ:
11. Հովսեփյան Ս., Հարությունյան Ա., Աղաջանյան Մ., Վերդյան Լ. Տեխնոլոգիա-3, 3-րդ դասարանի դասագիրք, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, 2018, 127 էջ:

12. Հովսեփյան Ս., Հարությունյան Ա., Աղաջանյան Մ., Լ. Վերդյան, Տեխնոլոգիա-4, 4-րդ դասարանի դասագիրք, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, 2018, 64 էջ:

13. Հովհաննիսյան Գ., Տողանյան Ն., Հովսեփյան Ա., Ավագյան Լ.,Ես և շրջակա աշխարհը-3, 3-րդ դասարանի դասագիրք «Մանմար» հրատարակչություն, Երևան, 2018, 126 էջ:

14. Հովհաննիսյան Գ., Տողանյան Ն., Հովսեփյան Ա., Ավագյան Լ., Ես և շրջակա աշխարհը-4, 4-րդ դասարանի դասագիրք «Մանմար» հրատարակչություն, Երևան, 2018, 143 էջ:

15. Մկրտչյան Ս., Աբրահամյան Ս., Իսկանդարյան Ս., Սարգսյան Ռ., Մաթեմատիկա-4, 4-րդ դասարանի դասագիրք, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, 2018, 175 էջ:

16. Յուզբաշյան Յ., Փահլևանյան Ա., Լուսինյան Ա., Երաժշտություն-4, 4-րդ դասարանի դասագիրք, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, 2018, 95 էջ:

17. Նանյան Լ., Միջառարկայական կապերի իրականացումը տարրական դասարաններում որպես գեղագիտական դաստիարակության օպտիմալացման միջոց, «Զանգակ-97» հրատարակչություն, 2003, 106 էջ:

18. Տեր-Գրիգորյան Ա., Մայրենի լեզվի դասը տարրական դասարաններում, Երևան «Լույս» հրատարակչություն, 1984, 544 էջ:

19. https://forum.armedu.am/forum/կրթական-ոլորտ/մասնագետի անկյուն/տարրական-դպրոց/2158-միջառարկայական-կապերը-մայրենի-լեզվի-դասերին) /հասանելի էր 15.11.2019/

20. http://armeco.am/publ/2-1-0-71#_ftnref2 /հասանելի էր 25.11.2018/

21. https://www.irtek.am/views/act.aspx?aid=25829/հասանելի էր19.01.2020/

22. https://arevayin.wordpress.com/ /հասանելի էր 12.04.2020/